

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԿԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՉՆԱՅԱԾ ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐՆԵՐԻՆ, ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ՆՇԱՆԱՎԱԽ ԵՆ ԻՆՉՊԵՍ ՆԵՐՔԻՆ, ԱՅՆՊԵՍ ԷՆ՝ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՐՏՆԵՐՈՒՄ»

Երեկ, հունիսի 30-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին ամենամյա հաշվետվությանը հանդես եկավ երկրի օրենսդիր մարմնի առջև: Իր խոսքում՝ վարչապետը մանրամասնեց հաշվետու ժամանակահատվածում երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը, արտաքին քաղաքական մարտահրավերների եւ դրանց կարգավորման ուղղությամբ գործադիր իշխանության ձեռնարկած քայլերը:

ԳՈՐԾԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՎԱՐՊԱԿԸ ՀԱՅՎԵԼ Է ԴՊՏՄԱԿԱՆ ՆՎԱՅՈՒԹՅՈՒՆԻ

Վարչապետը հավաստիացրեց, որ վերջին երկու տարիների ընթացքում երկիրն ունի 10 տոկոսի տնտեսական աճ, իսկ երեք տարվա ընթացքում երկրի տնտեսությունն ավելացել է գրեթե 30 միլիարդ լարիով: (Շարունակությունը՝ 4-րդ էջում)



ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՆԸ ՏԱՐԻ ԱՌԱՋ ՎՐԱՏԱՆԸ ԴԱՐՉԱՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՍՈՅԱՅՎԱԾ ԱՆԴԱՄ, ՈՐԸ ՆՇԱՆԱՎՈՐՎԵՅՈՒՄ ԵՆ ՇԵՏՎՈՐԱԿԱՆ ՔԱՅԼ ԴԵՊԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Հունիսի 27-ին լրացավ Վրաստանի Եվրամիության ասոցացված անդամի կարգավիճակի ստացման 9 տարին: Այդ կապակցությամբ, Վրաստանի կառավարության պաշտոնական կայքում, հրապարակվեց երկրի վարչապետի հատուկ հաղորդագրությունը, որտեղ նշված է, որ այդ պատմական իրադարձությունն ինքնին նշանավորվեց որպես հետեւողական քայլ դեպի Եվրամիությանը Վրաստանի վերջնական ինտեգրում:

Վրաստանի կառավարության ղեկավարի հավաստմամբ՝ ազատ առեւտրի համաձայնագիրը վրացի ձեռներեցներին հնարավորություն տվեց իրենց արտադրանքն առանց խոչընդոտների արտահանել Եվրամիություն: Առեւտրի աճող դինամիկան շոշափելի հետեւանքներ ունեցավ մեր ժողովրդի բարեկեցության վրա: Վրացական անձ- (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՐԱՎԿԻ ԿՈՐԱՄԻՏԵ. «ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է, ՈՐՊԵՍՁԻ ՎՐԱՏԱՆԸ ՉՍՏԱՆԱ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ»



Ինչպես հայտարարեց «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կորբախիձեն, ընդդիմության նպատակն է, որպեսզի Վրաստանը չստանա թեկնածուի կարգավիճակ, եւ դրա համար էլ սրում են բեւեռացումը՝ ստիպելով Սալոմե Ջուրաբիշվիլուն ներում շնորհել Գվարամիային:

Անձամբ մի քանի անգամ ասել են, որ ընդդիմության նպատակն է, որպեսզի Վրաստանը չստանա թեկնածուի կարգավիճակ, եւ դրա համար ամեն ինչ անում են: Երեւոյնքերի ընդունման համար, եւ բոլոր համապատասխան օրենքներն ընդունվել են: Ըստ այդմ, մենք մանրամասն հաշվետվություն կներկայացնենք, թե ինչպես են իրականացվել բոլոր 12 առաջարկությունները: Փաստորեն, բոլոր 12 կետերը սկզբունքորեն կատարվել են, եթե որեւէ մեկը հավելյալ հարցեր ունի, մենք կպատասխանենք, կքննարկենք ու կխոսենք դրանց մասին, բայց բոլոր 12 կետերը սկզբունքորեն կատարված են: Դրանցից դատաիրավական բարեփոխումների կետը կատարված է, օրենքն ընդունել ենք Վենետիկի հանձնաժողովի առաջարկությունների համապատասխան: Դա մեր պարտավորությունն էր, որը մենք կատարեցինք 12 կետերի համաձայն, - ընդգծեց Իրակլի Կորբախիձեն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՉԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի աշխատակազմը, քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման կառավարական հանձնաժողովի խորհրդատվական մեխանիզմի շրջանակներում, շարունակում է համդիպումները աշխատանքային խմբերի հետ:

Հունիսի 27-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի (Շարունակությունը՝ 4-րդ էջում)



ՎՐԱՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԻՐԱՎԿԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ԾՆՆՈՅԱՆ ՕՐԸ

Հունիսի 28-ին կայացավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու հետ:



Նիկոլ Փաշինյանը Վրաստանի վարչապետին շնորհավորեց ծննդյան 41-րդ տարեդարձի առիթով եւ բարեմաղթանքներ հղեց: Հեռախոսազրույցին քննարկվեցին նաեւ Հայաստան-Վրաստան համագործակցության օրակարգին առնչվող հարցեր:

«Վրաստան» թերթի աշխատակազմը իր եւ թերթի ընթերցողների անունից շնորհավորում է Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլուն՝ ծննդյան օրվա առիթով, մաղթում քաջառողջություն եւ արգասաբեր գործունեություն իր պատասխանատու աշխատանքում:

ԱՆՅՎԱՅՎԵՅԻՆ ՎՐԱՅ-ՀԱՅՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի 22-ին, Երեւանում, Հայաստանի եւ Վրաստանի արտաքին գործերի նախարարությունների միջեւ անցկացվեցին քաղաքական հերթական խորհրդակցությունները:



Գերատեսչությունների պատվիրակությունները ղեկավարում էին վրացական կողմից Վրաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Լաշա Դարսալիան, իսկ հայկական կողմից՝ Հայաստանի (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ՆՊԱՏԱԿԸ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ Է

Հունիսի 26-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու գլխավորությամբ, անցկացվեց երկրի կառավարության նիստ:



Նիստի օրակարգում ընդգրկված 12 հարցերի թվում «Դեղերի եւ դեղագործական գործունեության մասին Վրաստանի օրենքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Պետական գնումների մասին Վրաստանի օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Վրաստանի օրենքների նախագծերն էին: Փոփոխությունների համաձայն պետությունը կկարողանա ձեռք բերել նորարարական դեղագործական արտադրանք հատուկ պայմաններով՝ արտադրողի կամ առեւտրային լիցենզիա ստորոջ հետ անմիջական բանակցություններով: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱՄԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՆԸ ՏԱՐԻ ԱՌԱՋ ՎՐԱՍՏԱՆԸ ԴԱՐՉԱՎ ԵՎՐԱՄԻՆՏԵԳՐԱՆ ԱՍՈՑԻԱՅՎԱԾ ԱՆՂԱՍ, ՈՐԸ ԵՆԱՆԱՎՈՐՎԵՑ ՈՐՊԵՍ ՇԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԲԱՅԼ ԴԵՊԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նագրով Եվրամիությունում ազատ տեղաշարժվելու հնարավորությունը, որն առաջացել է անայցեգրային պայմանակարգի համաձայնագրով, հատկապես կարելի է նաև մեր քաղաքացիների համար,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին և հավելեց, որ անցյալ տարվա մարտի 3-ին ստորագրել է ԵՄ-

ին անդամակցելու Վրաստանի դիմումը, որի շարունակությունը Եվրամիության կողմից Վրաստանին Եվրոպական հեռանկարի շնորհում էր:

- Մեր պատմության մեջ առաջին անգամ Եվրոպան հրապարակավ է միանշանակ հայտարարեց, որ Վրաստանը դառնալու է Եվրամիության անդամ: Մինչ այս, երկար լքացումից հետո, 10 տարուց էլ քիչ ժամանակահատվածում, ձեռք բեր-

ված այս նվաճումը մեր կառավարության և հասարակության մի ստվար հատվածի համատեղ ջանքերի արդյունքն է: Կարծում եմ, որ այս գործընթացը կշարունակվի տարեվերջին՝ այդ ջանքերի արժանի ճանաչմամբ և թեկնածուի կարգավիճակի շնորհմամբ, որը կդառնա Վրաստանի Եվրամիության անդամակցելու վճռական փուլի սկիզբը,- ընդգծեց վարչապետը:



ՌՈՒՍԱՍԱՆ ՈՎՋՄԱԿԱՆ ԽՈՒՎՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞...

Հունիսի 24-ին, ռուս-ուկրաինական պատերազմին ակտիվ մասնակցություն ցուցաբերող «Վազներ» մասնավոր ռազմականացված կազմակերպության ղեկավար Եվգենի Պրիգոժինը հայտարարեց՝ կենտրոնական հրամանատարությանը չենթարկվելու, ռազմաճակատից զորամիավորումների դուրսբերման և Մոսկվա երթ կազմակերպելու մասին:

- Մենք ամբողջությամբ գրավեցինք Ռոստով քաղաքը: Ճանապարհին մեզ դիմապահեցին բնակիչները: Մենք օրինական ընտրված իշխանությունը տապալելու նպատակ չենք ունենցել: Մենք կանգ առանք, որպեսզի ռուսական արյուն չթափենք,- հայտարարեց Պրիգոժինը:

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը «Վազների» վերոնշյալ ելույթը բնորոշեց՝ որպես ռազմական խռովություն և դավաճանություն:

Հունիսի 25-ին, Բելառուսի նախագահի միջնորդությամբ, կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությամբ, Եվգենի Պրիգոժինի դեմ հարուցած քրեական գործը կրճատվեց, իսկ ինքը մեկնեց Միսկ:

ՌԴ Պետդոմայի պաշտպանության կոմիտեի նախագահ Անդրեյ Կարտապոլովի խոսքով, խռովությունը պայմանավորված էր նրանով, որ մինչ այդ, պաշտպանության նախարարության մատակարարման վարչությունում ձեռակերպված Պրիգոժինը զրկվեց պետությունից տրվող միջոցներից օգտվելու հնարավորությունից և, որ Եվգենի Պրիգոժինը հրաժարվեց պայմանագիր կնքել ՊՍ-ի հետ:

- Նրա համար այլևս ֆինանսավորման, նյութական ռեսուրսների հատկացում չէր լինելու,- պարզաբանեց Կարտապոլովը՝ հավելելով, որ դա Պրիգոժինի համար «գլխավոր խնդիրն էր»:

Նշենք, որ տարածված տեղեկատվությանը, ձեռքակալվել է Ուկրաինայում ռուսական ռազմական գործողությունների հրամանատարի տեղակալ, գեներալ Սերգեյ Սուրովիլինը՝ նրա անունը նշված է առնվազն 30 այլ բարձրաստիճան ռուս զինվորականների շարքում և հետախուզական պաշտոնյաների հետ, որոնք, նույնպես «Վազների» անդամներ են:

ՖՐԱՆՍԻԱ

ԻՐԱՐԱՆՑՈՒՄ Ի ՊՏԱՍՍԻԱՆ ՈՍՏԻՎԱՆԻ ԿՈՂՄԻՑ 17-ԱՄՅԱ ՊՏԱՆՈՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ

Երեքշաբթի՝ հունիսի 27-ին, 17-ամյա դեռահասին կանգնեցրել էին երկու ոստիկաններ՝ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար: Շրջանափող տեսանկյունով երևում է, որ ոստիկաններից մեկը նրա վրա ատրճանակ է ուղղել: Կրակոցների հետևանքով դեռահասը տեղում մահացել է: Ֆրանսիայի Նախտեր քաղաքում 17-ամյա տղային սպանած ոստիկանը ձերբակալվել է, նրան մեղադրանք է առաջադրվել դիտավորյալ սպանության համար:

Ոստիկանի կողմից Նանտեր քաղաքում 17-ամյա դեռահաս վարորդի սպանությունից հետո, վերջին օրերին, Ֆրանսիայում բողոքի մեծ ալիք է բարձրացել: Ցույցերն ուղեկցվել են անկարգություններով՝ ցուցարարները հրկիզել են մեքենաներ, ներխուժել են հասարակական շենքեր, որտեղ այրել են փաստաթղթեր և կահույք, ճայթուկներ են պայթեցրել ոստիկանության բաժինների առջև:

Իրավիճակի վերահսկողության համար մոբիլիզացվել է շուրջ 40 հազար ոստիկան: Իրավապահները ձերբակալել են առնվազն 180 մարդու: Ֆրանսիայի ներքին գործերի նախարարության տվյալներով՝ 170 ոստիկան վիրավորվել է:

ԳՈՐԾԱԴԻՐ

ՆՊԱՏԱԿԸ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆԿԱՏԱՄԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ Ե

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցությունների միջոցով:

Բնակչության նորարարական դեղերի հասանելիությունը բարելավելու նպատակով՝ դեղերը ձեռք կբերվեն հատուկ

պայմաններով՝ օգտագործելով Managed Entry Agreement մեխանիզմը, որը ենթադրում է դեղերի գնում հատուկ (զեղչված) գնով:

Նշվեց, որ օրենքի նախագծի ընդունումը դրականորեն

կազդի նորարարական օրիգինալ դեղագործական արտադրանքի օգտագործողների վրա, կբարձրացնի նորարար դեղամիջոցների հասանելիությունը և կբարելավի պետական միջոցների ծախսման արդյունա-

վետությունը: Այստեղ ընդգծվեց, որ արդյունքում հնարավոր կլինի ավելի շատ հիվանդների բուժման ֆինանսավորում կամ ֆինանսավորվող դեղերի թվի ավելացում՝ հաշվի առնելով բուժման ընթացքը:

ՆՈՐԻՑ ՎԵՏՈՒ...

...ԱՅՍ ԱՆԳԱՄ «ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին օգտվեց խորհրդարանի կողմից ընդունված օրենքներին վետո դնելու նախագահական իրավունքից և այս անգամ վետո դրեց «Ընտրական օրենսգրքում» ընդունված փոփոխությունների վրա, որոնք փոխում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և անդամների ընտրության կարգը:

Հիմնավորելով Վրաստանի նախագահի վետոն, նախագահի աշխատակազմը նշում է, որ փոփոխությունների համաձայն, հանձնաժողովի ստեղծումը, թեկնածուների ընտրությունն ու ներկայացումը կատարելու է խորհրդարանի նախագահը, իսկ ընտրությունը՝ խորհրդա-

րանի պարզ մեծամասնությամբ, ինչը նշանակում է միակուսակցական որոշում: «Նախագահին և անդամներին 100-ի փոխարեն 76 ձայնով ընտրելը վերացնում է կոնսենսուսի վրա հիմնված որոշումների անհրաժեշտությունը և մեծացնում բեռնաքանակ վտանգը: Վետոն ծառայում

է այս կոնսենսուսը պահպանելու նպատակին», - ասված է հիմնավորման մեջ: Նշվում է նաև, որ Վրաստանի նախագահը հայտարարում է մրցույթ և ստեղծում անկախ ու անկուսակցական պաշտոնյաների թեկնածուների ընտրության հանձնաժողով: Նախագահն ընտրված թեկնածուներին կներկայացնի խորհրդարանին:

Ինչպես պարզաբանում է վարչակազմը, նախագահը խորհրդարանին առաջարկում է ԿԸՀ-ի նախագահին ու անդամներին ընտրել առնվազն 90 ձայնով, ինչպես եղավ ժողովրդական պաշտպանի դեպքում:

ՀԱՐՑՈՒՄ



ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ՝ EUS EDISON RESEARCH-Ի

Ամերիկյան ուսումնասիրությունների EDISON RESEARCH կազմակերպությունը հրապարակել է տղիալական հարցման արդյունքները, որի ընթացքում Վրաստանի քաղաքացիներն իրենց դիրքորոշումն են հայտնել՝ երկրում գործող քաղաքական կուսակցությունների նկատմամբ:

Հարցման արդյունքներով, 37 տոկոսը նշել է, որ ընտրությունների դեպքում կքվեարկի «Վրացական երազանքի» օգտին, 25 տոկոսը՝ կպաշտպանի «Միասնական ազգային շարժմանը»:

Հատկանշական է, որ երրորդ հորիզոնականը 6 տոկոսով զբաղեցնում է Վրաստանի նախկին վարչապետ (2019-2021) Գիորգի Գախարիայի գլխավորած «Վրաս-

տանի համար» կուսակցությունը: Այդ ցուցակում 4-րդը՝ 5 տոկոսով, Շալվա Նաթելաշվիլու «Լեյբորիստական» կուսակցությունն է:

Այսպիսով, եթե պայմանականորեն խորհրդարանական ընտրություններն անցնեն այսօր, ապա վերոնշյալ 4 կուսակցությունները կկարողանային հաղթահարել 5 տոկոսի ընտրաշեմը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՆՅՎԱՅՎԵՅԻՆ ՎՐԱՅ-ՀԱՅՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանի արտաքին գործերի փոխնախարար Վահան Կոստանյանը:

Քաղաքական խորհրդակցությունների ընթացքում կողմերն ընդգծեցին երկկողմ բարիդրացիական հարաբերությունների աճող դինամիկան, քննարկեցին հայ-վրացական բարձր մակարդակի շփումները և քաղաքական երկխոսության օրակարգը: Կողմերը պատրաստակամություն

հայտնեցին ջանքեր ներդնել պետությունների միջև հարաբերությունների առավել խորացման ուղղությամբ:

Անդրադարձ կատարվեց տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցերի լայն շրջանակի, ինչպես նաև երկկողմ տնտեսական, մշակութային, կրթական կապերի ամրապնդմանը, միջազգային կազմակերպություններում համագործակցությանը, իրավապայմանագրային դաշտի բարելավմանը:

Նույն օրը, Վրաստանի արտաքին գործերի նախարարության Լեւան Միքելաձեի անվան դիվանագիտական վերապատրաստման և հետազոտական ինստիտուտի տնօրեն Իրինա Դախունդարիձեն և Հայաստանի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցի տնօրեն, դեսպան Վահե Գաբրիելյանը ստորագրեցին իրենց գլխավորած հաստատությունների միջև փոխըմբռնման հուշագիր:

ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԸ ԶՐՈՒՅՏՆԵՆ ԼԱՆԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՇԵՏ

Հունիսի 27-ին վրաց ճանաչված շախմատիստուհի Նանա Ալեքսանդրիան հյուրընկալվեց Վրաստանում Հայաստանի դեսպանությունում:

Նանա Ալեքսանդրիայի և Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանի հանդիպմանը շախմատիստուհին Հայաստանի դեսպանին ներկայացրեց Թբիլիսիում ավանդական դարձած շախմատային հուշանր-

ցաշարը՝ նվիրված հայազգի լեգենդար շախմատիստ, գրոսմայստեր, աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանին:

Աշոտ Սմբատյանը շնորհակալություն հայտնեց Վրաստանի շախմատի ֆեդերացիային, «ՆՏ» (Նոնա Գափրին-

դաշվիլի, Տիգրան Պետրոսյան, Նանա Ալեքսանդրիա) շախմատային ակումբին և անձամբ Նանա Ալեքսանդրիային՝ հայազգի շախմատիստի հիշատակին ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար:



Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ


ԱՅՑ

ՊԱՏՄԱՆԻՑՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԱՏՎՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍԱՆՈՒՄ

Յունիսի 27-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպեց Եվրամիության պատժամիջոցների իրականացման հարցերով միջազգային հատուկ ներկայացուցիչ Դեյվիդ Օ՛Սալիվանի եւ ԱՄՆ-ի եւ Միացյալ Թագավորության ներկայացուցիչների՝ դեսպան Ջեյմս Օ՛Քրայնի եւ Կոմար Այերի հետ:

Հանդիպմանը քննարկվեց Վրաստանի մշտական համակարգումը Եվրամիության եւ միջազգային հանրության հետ՝ կապված Ռուսաստանի դեմ կիրառվող ֆինանսական պատժամիջոցների հետ: Ուշադրություն հատկացվեց Վրաստանի քաղաքական եւ հումանիտար ուղղություններով, Ուկրաինային ցուցաբերվող հաստատակամ աջակցությանը: Հանդիպմանը մասնակցել են Վրաստանում Եվրամիության

դեսպան Պավել Զերչինսկին, Վրաստանում ԱՄՆ դեսպան Քելլի Դեզմանը եւ Վրաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Մարկ Քլեյթոնը: Վրացական կողմից՝ փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին, արտաքին գործերի նախարար Իլիա Դարիբաշվիլին, ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին եւ կառավարության վարչակազմի ղեկավար Ռեւազ Ջավելիժեն:



ՇՆՈՐՎԱԳՐԱՆՔ՝ ՎՐԱՍԱՆԻ ՄԱՅՄԵՂԱԿԱՆՆԵՐԻՆ ՂՈՒՐԲԱՆ ԲԱՅՐԱՄԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՐ

Յունիսի 28-ին մահմեդական աշխարհը նշեց Ղուրբան Բայրամի՝ բարության հաղթանակի, փոխադարձ հարգանքի տոնը: Տոնի առիթով Վրաստանի մահմեդական բնակչությանը շնորհավորեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին:

ԱՌՊՋԱՊԱՂՈՒԹՅՈՒՆ

ԹԲԻԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՐ ԿՖԻՆԱՆՍԱՎՈՐԻ ԼՅԱՐԴԻ ՓՈԽՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ

Յունիսի 27-ին, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, մայրաքաղաքի մունիցիպալիտետի նիստում, հայտարարեց, որ Թբիլիսիի քաղաքապետարանն ամբողջությամբ կֆինանսավորի մայրաքաղաքի բնակիչների համար լյարդի փոխպատվաստման վիրահատությունները, որի արժեքը կազմում է շուրջ 120 հազար լարի (ավելի քան 45 հազար դոլար):



Ինչպես նշեց քաղաքապետը, այս որոշմամբ Թբիլիսիի քաղաքապետարանը միանում է վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախաձեռնությանը, որի համաձայն Վրաստանի բոլոր քաղաքացիների համար այդ վիրահատությունն ամբողջությամբ կֆինանսավորվի:


Լարի (26,5 հազար դոլար): - Թբիլիսիի քաղաքապետարանում բազմաթիվ ծրագրեր են ֆինանսավորվում առողջապահության ուղղությամբ: Գլխավորներից մեկը լյարդի փոխպատվաստման ծրագիրն է, որը քաղաքի առողջապահական եւ սոցիալական սպասարկման ծառայությունն իրականացնում է 2018 թվականից,- նշեց Կախա Կալաձեն:

Նշենք, որ լյարդի փոխպատվաստման վիրահատություններն ամբողջությամբ ֆինանսավորելու որոշումն ուժի մեջ կմտնի 2023 թ. հունիսի 1-ից: Թբիլի-

սիի քաղաքապետարանի ծրագրից կկարողանան օգտվել այն անձինք, որոնք առնվազն մեկ տարի ապրում են Թբիլիսիում եւ գրանցված են մայրաքաղաքում:

Ավելացնենք, որ երկրի վարչապետի նախաձեռնությամբ Վրաստանի քաղաքացիների համար լյարդի փոխպատվաստման վիրահատությունը միանգամայն անվճար է դարձել այս տարվա հունիսի 19-ից:

«ՓԱՍՏԱԲԱՆԻ ՏՈՒՆ»՝ ՎՐԱՍԱՆՈՒՄ



Թբիլիսիում, հանդիսավոր պայմաններում, կայացավ «Փաստաբանի» բացման արարողությունը: Բացման հանդիսությանը մասնակցեցին եւ խոսքով ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, երկրի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեն, Վրաստանի փաստաբանների ասոցիացիայի նախագահ Դավիթ Ասաթիանին:

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՎՐԱՍԱՆԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ Է 130 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է փոխհատուցման գումարը, որը Ռուսաստանը վճարելու է Վրաստանին՝ 2008 թվականի պատերազմի հարցով միջպետական հայտի կապակցությամբ:

«Վրաստանը Ռուսաստանի դեմ» գործող որոշումը հրապարակվել էր անցյալ տարվա հունվարին, թեպետ փոխհատուցման գումարի հարցը քննարկվեց լրացուցիչ:

Եվրոպական դատարանը գտնում է, որ Մոսկվան, երեք ամսվա ընթացքում, պետք է Վրաստանին վճարի 130

միլիոն եվրո: Այդ գումարի զգալի մասը՝ 115 միլիոն եվրո՝ որպես փոխհատուցում տրվելու է Վրաստանի մոտ 23 հազար քաղաքացիների, ովքեր մինչ օրս չեն կարողանում վերադառնալ Ցխինվալիի տարածաշրջանում եւ Աբխազիայում գտնվող իրենց տանիքներ:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ (30 ԽՈՒՄԻՍԻ)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Table with 2 columns: Տարադրամ, Լարի. Rows include 1 ԱՄՆ ԴՈԼԱՐ (2.6177), 1 ԵՎՐՈ (2.8591), 100 ՌՈՒՔԼԻ (3.0089), 1000 ԴՐԱՄ (6.7650).

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ԱՄՍԱԲԱՆԱՔԻ ՀԱՆԴԻՊՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆՎԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐՄԱՆ ՀԱՐՅՈՎ



Քաղաքացիական բյուջեի ծրագրի համար՝ 2024 թվականին տեղական բյուջեից նախատեսված է 30 000 լարի:

Նշված գումարով կֆինանսավորվեն բնակչության կողմից ներկայացված նախագծերը:

Հանդիպմանը մասնակցեցին Ախալքալաքի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Մկրտիչ Մղդեայանը, քաղաքապետարանի եւ ավագանու աշխատակիցներն ու հետաքրքրվող անձինք:

Նախագծեր ներկայացնելու հնարավորություն ունեն Վրաստանի այն քաղաքացիները, ովքեր գրանցված են կամ ապրում են Ախալքալաքում:

Նախագիծը իրականացվելու է Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետարանի իրավասությունների շրջանակներում ու ծառայելու է բնակչության բարեկեցությանը եւ ոչ թե մասնավոր բիզնեսի շահերին:

Ընտրված նախագծերը կֆինանսավորվեն մունիցիպալ բյուջեից, քաղաքացիական բյուջեի ծրագրի շրջանակներում, քաղաքացիների կողմից նախագծի իրականացման համար հատկացված գումարով:

Նախագծերի ընտրման համար վերջնական որոշումը քաղաքացիները կկայացնեն ընտրության ընթացքում:

ԵՐԱՉԱՆՔՆԵՐՆ ԻՐԱՎԱՆԱՆՈՒՄ ԵՆ

Ախալքալաքի մունիցիպալիտետի բնակավայրերում ճանապարհաշինարարական աշխատանքները շարունակվում են: Վերջապես 195 ամյա Աբուլ գյուղը նույնպես կունենա մատչելի ու հարթ ճանապարհ:

Հիմա արդեն կատարվում են բետոնապատման աշխատանքներ: Բետոնապատվում է Աբուլ գյուղից մինչեւ հարեւան Կարտիկան տանող ճանապարհի 6 կիլոմետրանոց ճանապարհի (որը կապում է գյուղը քաղաքի եւ արտաքին աշխարհի հետ) 4 կմ հատվածը, որը, ըստ շինարարության ղեկավար Քերոբյան Գրիգորի, բարենպաստ եղանակակալին պայմանների դեպքում, ավարտին կհասցվի մեկից մեկուկես ամսվա ընթացքում՝ մեկ օրում բետոնապատելով ընդհանուրի 100-150 մետր հատվածը, եւ մինչեւ տարեվերջ վերջնական ավարտին հասցնելով ընդհանուր աշխատանքը: Այս ամենի հետ, եթե գյուղում զազիֆիկացում էլ անցկացվի, ապա բավական դյուրին կլինի հաղթահարել կենցաղային բազում հոգսեր:

ՆԻՆՈՍՄԻՆԴԱ ՆԵՐԿԱՅԱՎԵՅ ՌԻՍԱՐՎԱ ԱՄՓՈՓՉ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Նինոծմինդայի երաժշտական դպրոցն այսօր հանդես եկավ ուսումնական տարվա ամփոփիչ համերգային ծրագրով՝ դպրոցի սաները հասարակության առջեւ հանդես եկան հիշարժան համարներով:

Միջոցառմանը ներկա էին Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը, սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի մշակույթի, կրթության,



ԲՈՒՆԻՍԻ ԸՆԹԱՅՔԻ ՄԵՋ Է ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԲՈՒՆԵՅԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ֆինանսավորմամբ՝ Բոլնիսի քաղաքում ակտիվորեն ընթանում է ժամանակակից չափանիշներին համապատասխան քոլեջի կառուցումը:

Եռահարկ քոլեջը նախատեսված է 150 ուսանողի համար, որը կունենա դասասենյակներ, գրադարան, վարչական տարածք, կոնֆերանսների, ցուցադրության դահլիճներ, շենքը կահավորված կլինի կենտրոնացված ջեռուցմամբ, օդափոխության համակարգով:

Դպրոցն ամբողջությամբ կհարմարեցվի հաշմանդան անձանց կարիքներին, կլինեն թեքահարթակներ, վերելակներ ու հարմարեցված սանհանգույց: Դպրոցի բակում կկառուցվի մարզահրապարակ, կստեղծվի հանգստի կանաչ գոտի:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ԶՆԱՅՈՒ ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐՆԵՐԻՆ, ԶԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԸ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԵՆ ԻՆՉՊԵՍ ՆԵՐՔԻՆ, ԱՅՆՊԵՍ Է՛Ն ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏԵՐՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Մեկ բնակչի հաշվով, ներքին համախառն արտադրանքի գումարը կազմում է 8200 դոլար: Հիշեցնենք, որ երեք տարի առաջ՝ 2020 թվականին, այդ գումարը կազմում էր ընդամենը 4500 դոլար: Նախորդ տարվա համեմատ՝ պետք է նշել, որ արտադրանքի համախառն ներքին արտադրանքի համեմատ, բարելավվել է 6,3 տոկոսով եւ հասել է պատմական նվազագույնի՝ 4,1 տոկոսի: - հայտարարեց վարչապետը:

- Նախորդ տարիների համեմատ՝ գործազրկության մակարդակը զգալիորեն նվազել է հասել պատմական նվազագույնի՝ 17,3 տոկոսի: Հիշեցնենք, որ 2012 թվականին, երբ մենք եկանք իշխանության գլուխ, գործազրկության մակարդակը հասնում էր գրեթե 27 տոկոսի: Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում՝ 70 հազարով ավելացավ աշխատողների թիվը եւ կազմեց 1,271000: Գործազրկության մակարդակը, առաջին հերթին, պայմանավորված է մասնավոր հատվածում նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչը, իր հերթին, իշխանության համար ստեղծված բարենպաստ մթնոլորտի արդյունքն է: Պատմական նվազագույնի է հասցվել նաեւ աղքատության մակարդակը, այն ներկայումս կազմում է 15,6 տոկոս: Հիշեցնենք, որ 2012 թվականին աղքատության մակարդակը կազմում էր 30 տոկոս: Դա նշանակում է, որ վերջին տասը տարիների ընթացքում աղքատության մակարդակը կիսով չափ նվազել է եւ ավելի քան կես միլիոն մարդ հաղթահարել է աղքատության շեմը, - հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՎԱՎԵՐԱՅՎԵԼ ԵՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՌԵԿՈՐԴՄԵՆՆԵՐ ԵՆՆԵՐԻ ՆԵՐՊՐՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում՝ որպես նշանակալի ձեռքբերում, վարչապետը խորհրդարանին ուղղված իր ամենամյա զեկույցում նշեց, որ օտարերկրյա անմիջական ներդրումները հասել են ռեկորդային ցուցանիշի՝ 2 միլիարդ դոլարի: Վարչապետի հավաստմամբ՝ ռեկորդային ցուցանիշներ են գրանցվել նաեւ արտահանման եւ զբոսաշրջության եկամուտների ստացման գործում: Անցյալ տարի զբոսաշրջությունից ստացված եկամուտը 107,6 տոկոսով գերազանցեց 2019 թվականի ցուցանիշը եւ կազմեց 3,5 միլիարդ ԱՄՆ դոլար: Եթե այդ ցուցանիշը համեմատենք 2021 թվականի տվյալների հետ, ապա աճը կազմել է 182,5 տոկոս: Բավական է նշել, որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում երկիրն ընդունել է 1,2 միլիոն օտարերկրյա զբոսաշրջիկ եւ նրանցից ստացած եկամուտը կազմել է ռեկորդային գումար՝ 800 միլիոն լարի, ինչը 2019 թվականի ցուցանիշը գերազանցել է մոտ 38 տոկոսով: ընդգծեց վարչապետը՝ հավելելով, որ, ընդհանուր առմամբ, մինչեւ տարեվերջ, երկիր կարող է այցելել մոտ 6 միլիոն միջազգային զբոսաշրջիկ, ովքեր իրենց հավանական եկամուտը կարող է կազմել 4,5 միլիարդ ԱՄՆ դոլար:

մուտների ստացման գործում: Անցյալ տարի զբոսաշրջությունից ստացված եկամուտը 107,6 տոկոսով գերազանցեց 2019 թվականի ցուցանիշը եւ կազմեց 3,5 միլիարդ ԱՄՆ դոլար: Եթե այդ ցուցանիշը համեմատենք 2021 թվականի տվյալների հետ, ապա աճը կազմել է 182,5 տոկոս: Բավական է նշել, որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում երկիրն ընդունել է 1,2 միլիոն օտարերկրյա զբոսաշրջիկ եւ նրանցից ստացած եկամուտը կազմել է ռեկորդային գումար՝ 800 միլիոն լարի, ինչը 2019 թվականի ցուցանիշը գերազանցել է մոտ 38 տոկոսով: ընդգծեց վարչապետը՝ հավելելով, որ, ընդհանուր առմամբ, մինչեւ տարեվերջ, երկիր կարող է այցելել մոտ 6 միլիոն միջազգային զբոսաշրջիկ, ովքեր իրենց հավանական եկամուտը կարող է կազմել 4,5 միլիարդ ԱՄՆ դոլար:

ՎԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՉԵՌՆԱԾ ՏՐԱՎԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ

Վարչապետը հաշվետվության մեջ անդրադարձավ նաեւ պետության նախաձեռնությանը երկրում իրականացվող տնտեսական եւ սոցիալական առանձին ծրագրերի իրականացման գործընթացին: Վարչապետի խոսքով, «Արտադրի՛ր Վրաստանում» կառավարական ծրագրով ֆինանսավորվել է շուրջ 11 հազար նախագիծ, արդյունքում ստեղծվել է 62500 նոր աշխատատեղ:

- Այս տարի տարածաշրջաններում ֆինանսական աջակցություն կցուցաբերվի շուրջ 1000 նախագծի, ինչը հնարավորություն կտա ստեղծել 6 հազար նոր աշխատատեղ: - նշեց վարչապետը: Անդրադառնալով կառավարության կողմից նախաձեռնված մեկ այլ՝ «Նեդրի՛ր ապագան» ծրագրին, Վրաստանի վարչապետը նշեց, որ կենտրոնական բյուջեի ֆինանսավորմամբ, ներկա դրությամբ, արդեն ստեղծվել է շուրջ 20 հազար հեկտարի նոր այգի, որտեղից ստացվել է ավելի քան 40 հազար տոննա բերք, իսկ մթերքի իրացումից՝ գրանցվել է 85 միլիոն լարի:

Խոսելով գյուղատնտեսության ոլորտի ձեռքբերումների մասին՝ Իրակլի Ղարի-

բաշվիլին իր ամենամյա հաշվետվության մեջ նշեց, որ 2022 թվականի տվյալներով, գյուղատնտեսության ոլորտում արտադրվել է 15,2 միլիարդ լարիի ընդհանուր արժողության արտադրանք: Վերջին տասը տարիների ընթացքում այդ ցուցանիշը ավելացել է 112 տոկոսով:

- Հարկ է նշել, որ անցյալ տարի Վրաստանը աշխարհի գրեթե 96 երկրներ արտահանել է ռեկորդային ծավալի արտադրանք՝ 1,3 միլիարդ դոլարի ընդհանուր արժողությամբ, ինչը 2021թ. ցուցանիշը գերազանցել է 10,5 տոկոսով, - ընդգծեց վարչապետը:

ԻՐԱՎԱՆՅՎՈՒՄ ԵՆ ԵՆԹԱՎՈՒՅՆԱՅԻՆ ԱՅՆԱՍՏՎԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

Անդրադառնալով կառավարության առաջիկա ծրագրերին՝ Իրակլի Ղարիբաշվիլին խորհրդարանին ուղղված իր ամենամյա հաշվետվության մեջ նշեց, որ այս տարի ենթակառուցային նախագծերի համար ծախսվելու է մոտ 6 միլիարդ լարի:

- Այսօրվա դրությամբ արդեն ավարտվել է 234 կիլոմետր մայրուղային ճանապարհի շինարարությունը: Ընդհանուր առմամբ՝ վերջին տասը տարիների ընթացքում իրականացվել են 424 կամրջի շինարարության-վերանորոգման, 13600 կիլոմետր ճանապարհների կարգավորման աշխատանքներ, - հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքով, անելիքները դեռեւս շատ են ջրամատակարարման եւ գազի-ֆիկացման ուղղությամբ, թեպետ վստահություն հայտնեց, որ մինչեւ 2024 թվականի վերջը, երկրի բնակչության 93 տոկոսը կունենա բնական գազ, իսկ ինչ վերաբերում է ջրամատակարարմանը, ապա, վարչապետի հավաստմամբ, մինչեւ 2025 թվականի վերջը, երկրի բոլոր խոշոր քաղաքները կապահովվեն 24-ժամյա ջրամատակարարմամբ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՏՄԵՆՅԱՆ ԿԱՌՈՒՅՆՆԵՐԻՆ ԻՆՏԵՐՈՒՍԸ՝ ԳԼՍՎՈՐ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆ

Խորհրդարանին ուղղված ամենամյա հաշվետվության մեջ, Վրաստանի վարչա-

պետն առանձնակի կանգ առավ եվրատնային կառույցներին ինտեգրման թեմային, նշելով, որ Վրաստանը լիովին արժանի է ստանալու Եվրամիության անդամի թեկնածուի կարգավիճակ:

- Ես իմ եվրոպացի գործընկերներին եւ բարեկամներին հանդիպումների ժամանակ ասել եմ, որ եթե Վրաստանը չստանա Եվրամիության թեկնածուի կարգավիճակ, ապա դա Եվրամիության կողմից կլինի հերթական ռազմավարական սխալ, - հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Նրա խոսքով, թեկնածուի կարգավիճակի ստացման համար առաջադրված 12 հանձնարարականներից 11-ը, փաստորեն, արդեն կատարվել են, եւ Վրաստանը ընթացիկ տարվա վերջին պետք է ստանա Եվրամիության թեկնածու երկրի կարգավիճակ:

- Մեր եվրոպական գործընկերները բացահայտորեն ասացին, որ Վրաստանը կդառնա եվրոպական ընտանիքի անդամ: Հատկանշական է, որ վերջին 30 տարիների ընթացքում մնան կտրական հայտարարություն չի եղել: Դա փաստորեն նշանակում է, որ մեր թիմն այդ ուղղությամբ հասել է մեծ հաջողության: Ինչ խոսք, թեկնածուի կարգավիճակը խորհրդանշական է, թեպետ նշանակալի է ինտեգրման հաջորդ փուլի համար: Մենք վերջին տասը տարիների ընթացքում հստակորեն ապացուցեցինք, որ իրատեսորեն կողմնորոշված ենք եվրաինտեգրման ուղղությամբ, որ մեր քաղաքացիներն իրատեսական կոնկրետ արդյունք են սպասում: Ցանկանում են ընդգծել, որ մեր գործընկերները գրեթե ամբողջությամբ հաստատում են մեր կողմից ներկայացրած հիմնավորումները, - հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վրաստանի խորհրդարանում երկրի վարչապետի ամենամյա հաշվետվությունից հետո՝ միատը շարունակվեց հարցուպատասխանի ձեռնարկով: Թերթի հաջորդ համարում մանրամասն կներկայացնենք պատգամավորների հարցերը եւ վարչապետի պատասխանները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րարի առաջին տեղակալ Լիա Գիզաուրին հանդիպեց «Լրատվամիջոցների եւ տեղեկատվության մատչելիության» եւ «Ազգային փոքրաքանակ համայնքների» աշխատանքային խմբերի ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը պետնախարարի առաջին տեղակալը խոսեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 2021-2030 թվականների պետական քաղաքականության արդյունավետ իրականացման տեսանկյունից խորհրդատվական աշխատանքային խմբերի աշխատանքի ու թեմատիկ հանդիպումների շրջանակներում արտահայտած դիտողությունների եւ հանձնարարականների նշանակության մասին: Նա առանձնակի ընդգծեց, 2023-2024 թվականների գործողության ծրագրի շրջանակներում, վերոնշյալ խմբերի ու ակտիվությունների կատարման դիմամիակն:

Խորհրդատվական աշխատանքային խմբերի հանդիպմանը մասնակցեցին կառավարական հանձնաժողովի համապատասխան գերատեսչությունների ղեկավար անդամները, ովքեր հանդիպման մասնակիցներին մանրամասն տեղեկատվություն փոխանցեցին, իրենց գերատեսչությունների իրավասության շրջանակներում, գործողության ծրագրով նախատեսված պարտավորությունների կատարման ու ձեռքբերումների մասին:

Աշխատանքային հանդիպմանը ներկա էին ինչպես կենտրոնական, այնպես էլ՝ տարածաշրջանային լրատվամիջոցների, մասնավորապես «Վրաստան» եւ «Գյուրջիստան» թերթերի ներկայացուցիչներ, ովքեր

հակիրճ տեղեկատվություն փոխանցեցին քաղաքացիական հասարակության ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար լրատվամիջոցների ու տեղեկատվության մատչելիության բավարարման տեսանկյունից իրականացված միջոցառումների մասին: Հանրային հեռարձակողի կողմից ներկայացվեց տեղեկատվություն՝ ազգային փոքրամասնությունների համար մայրենի լեզվով ինչպես հեռուստատեսությամբ, այնպես էլ՝ կայք-էջերի միջոցով նորությունների ներկայացման նախաձեռնությունը:

Քննարկվող թեմայի տեսանկյունից «Վրաստան» եւ «Գյուրջիստան» թերթերի գործունեության, պարբերականների տարածման շրջանակի, ընթերցողների մասին հանդիպմանը մանրամասն տեղեկատվություն հաղորդեց «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբորթյանը:

Միջոցառմանը խոսքով ելույթ ունեցան Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի առաջին տեղակալ Լիա Գիզաուրին, Վրաստանում ՄԱԿ-ի գաղափարների կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ Գիորգի Շարաբիձեն, Վրաստանի արդարադատության նախարարության միջազգային հանրային իրավունքի դեպարտամենտի փոխնախագահ Թեոնա Ծինծալաշվիլին, հանրային հեռարձակողի «Բազմերանգ Վրաստանի» ղեկավար Ռամիլիա Ալիևան:



Նշենք, որ քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման կառավարական հանձնաժողովի շրջանակներում գործում են 6 խորհրդատվական թեմատիկ աշխատանքային խմբեր: Դրանք են երիտասարդության եւ կանանց ուժեղացման, սոցիալ-տնտեսական ինտեգրման, լրատվամիջոցների եւ տեղեկատվության մատչելիության, փոքրաթիվ ազգային փոքրամասնությունների աջակցության, կրթության եւ պետական լեզվի, ինչպես նաեւ միջնադարից երկխոսության անցկացման աշխատանքային խմբերը:

Աշխատանքային խմբերի հանդիպումն անցկացվեց Վրաստանում ՄԱԿ-ի գաղափարների ծրագրի համագործակցությամբ եւ Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ:

ՄԻՄՆ ԿԻԼԱՉԵ